ՀԱՐԿԱԴԻՐ ԿԱՏԱՐՈՒՄՆ ԱՊԱՀՈՎՈՂ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԱՊՕՐԻՆԻ ԾԱԳՈՒՄ ՈՒՆԵՑՈՂ ԳՈՒՅՔԻ ԲՌՆԱԳԱՆՁՄԱՆ ԵՎ ՀԱՏՈՒԿ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ԲԱԺՆԻ ԳԼԽԱՎՈՐ ԽՈՐՀՐԴԱՏՈՒԻ ՊԱՇՏՈՆԻ ՀԱԿԻՐՃ ՆԿԱՐԱԳԻՐԸ

1. Գործառույթներ.

Բաժնի գլխավոր խորհրդատուն՝

1. ապահովում է հարկադիր կատարման ենթակա ակտերի հարկադիր կատարումը.
2. իրականացնում է Բաժնի կանոնադրությամբ նախատեսված առանձնակի տեսակի կատարողական վարույթներով համապատասխան կատարողական գործողությունները՝ ոլորտը կարգավորող օրենսդրությանը համապատասխան.
3. իրականացնում է ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման վերաբերյալ կատարողական վարույթներով համապատասխան կատարողական գործողություններ.
4. իրականացնում է առավել բարդ կատարողական վարույթների վարումը և հատուկ արձագանք պահանջող կատարողական գործողությունները.
5. կազմակերպում է կատարողական վարույթների արխիվացման գործընթացը.
6. պատասխանում է Բաժին ներկայացված դիմում-բողոքներին.
7. կատարողական վարույթի կողմերին քրեական պատասխանատվության ենթարկելու գործերով համագործակցում է Ծառայության համապատասխան բաժնի հետ.
8. Ծառայությունում առաջին անգամ պաշտոն զբաղեցնող անձանց Ծառայության գործառույթներին ծանոթացնելու նպատակով նշանակվում է որպես փորձաշրջանի համակարգող.
9. մասնակցում է Ոստիկանության և այլ պետական մարմինների համատեղ շրջայցերի և այլ միջոցառումներին որոնք ուղղված են Բաժնի, Ծառայության կանոնդրական խնդիրների լուծմանը.
10. կատարում է բաժնի կանոնադրությամբ սահմանված և (կամ) Բաժնի պետի կողմից իր իրավասության սահմաններում տրված այլ հանձնարարականներ:

2. Պաշտոնին ներկայացվող պահանջները.

Հարկադիր կատարումն ապահովող ծառայության ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման և հատուկ նշանակության բաժնի գլխավոր խորհրդատուի պաշտոնում կարող է նշանակվել այն անձը, ով զբաղեցրել է Ծառայության գլխավոր խմբի պաշտոն կամ առնվազն երկու տարի՝ առաջատար խմբի պաշտոն կամ ունի հանրային ծառայության առնվազն երկու տարվա ստաժ կամ երեք տարվա մասնագիտական աշխատանքային ստաժ կամ պաշտոնի անձնագրով պահանջվող աշխատանքի բնագավառում՝ երեք տարվա աշխատանքային ստաժ:

Պաշտոնին ներկայացվող մասնագիտական պահանջները սահմանված են ՀՀ փոխվարչապետի 30 հուլիսի 2020 թվականի N 461-Ն որոշմամբ: